

Պատար Սէրասքերի

արեւմտեան շրջան, և գետեղումը է կըր-
ծալին խոռոչին մէջ՝ ձախ առինքին
դրեթէ ճիշդ առկա՝ երկու թոքերուն
մէջ տեղը։ Սիրտը խոռոչաւոր դնու-
մէ՛ կոչուած և գագաթը դէպ ի վար
շրջած։ Իւր մեծութիւնն է՝ ամեն մար-
դունը գրեթէ իւր բռանը չափ, իւր
ծանրութիւնն է 70-80 արամ։

Ըսինք թէ սիրտը խոռոչաւոր դնու-
մէ՛ է։ այս խոռոչները թուով երկուք
են, մին աջ՝ և միւսը ձախ, աջը ձա-
խին հետ բնաւ հարողակցութիւն
չունի։

Սիրտը մէկ վարկենի մէջ գրեթէ
70 անգամ կը սեղմուի, և կը թուա-
նայ, այս է որ կը պատճառէ սրտին
տրոփումները, զոր կը լսենք երբ ա-
կանջնիս գնենք մեկու մը կուրծքին
ձախ կողմը։

Երբ սիրտը սեղմուի՝ նորա ձախ խո-
ռոչին մէջ գտնուած արիւնը դուրս
կործակուի յատուկ խողովակի մը մի-
ջոցաւ, որ անկէ կը ծագի, և որ հետ
զհետէ ճիւղաւորելով մարմնոյն ամեն
կողմը կը բաշխուի, և ամեն կողմ կը
առաւելէ արիւնը, որն որ այսպէս մարմ-
նոյն ամեն մասանցը մէջ մտնելով գա-
նունք կը սնուցանէ, և կեանքը վառ կը
պահէ նոցա մէջ։ Բայց սոյն հեղուկը
այսպէս անգամ մը մեր հիւսուածոց
մէջ մտնելով գտնոնք սնուցանելէ յե-
տոյ՝ այլ ևս կը կորսնցունէ իւր սնու-
ցիչ կորողութիւնը, և որովհետեւ մեր
հիւսուածներն և մեր գործարաններն
անդադար անմիջապէս կ'աշխատ-
ուանային, և ապրիլ կուղեն, ուստի
պէտք է որ արիւնն ալ անդա-
դար նորոգուի, և զգնու սնուցանե-
լու կարողութիւնը։ Այս նպատակին
համար արիւնը ետ կը դառնայ և կու-
գայ նորէն դէպ ի սիրտ։

Բայց արեւն այս յետադարձաց
շարժման յառկացեալ խողովակներն
բոլորովին աւարտ են, զի անկարելի
է որ հեղուկ մը մի և նոյն խողովակին
մէջ՝ երկու իրարու հակառակ շար-
ժումներ կատարէ։ Արիւնը դէպ ի սիրտ
առնող խողովակներն հետագայէն իրա-
րու հետ միանալով մէկ մեծ բուն մը
կը կազմեն, որ կը յանգի սրտին աջ
խոռոչին մէջ, որով սոյն խոռոչին մէջ
կը մանէ վերագործող արիւնը և բո-
լորովին անշտուած է այն արիւնէն,
որ, ինչպէս ըսինք, կը մեկնէր սրտին
ձախ խոռոչէն։

Սրտէն մեկնող արիւնը կենդանի է,
սնուցիչ՝ կորողութիւն մ'ունի, իւր
կեդրանաւորին է սրտին ձախ խոռոչը,
և իւր գոյնն է բաց կարմիր, դէպ ի
սիրտէ դուրս գալով արիւնը անկենդան է,
յորմար չէ սնուցանելու, իւր կեդրո-
նաւորին է սրտին աջ խոռոչը, և իւր
գոյնն է մութ կարմիր կամ սև։

Արդ տեսնենք թէ ինչպէս սոյն ան-
կենդան արիւնը կը վերակենդանանայ,
և ապա կը մանէ սրտին ձախ խոռոչին
մէջ։ Արեւն սոյն վերակենդանացու-
մը կը կատարուի շնչառութեան միջո-
ցաւ՝ յատուկ գործարաններու մէջ,
ուր կը մանէ այն անկենդան ու սև
արիւնը, որ քիչ մ'աւել սրտին աջ
խոռոչին մէջն էր։ Այս գործարաննե-
րը են թոքերը։

Թոքերը, երկու մեծահա-
տոր մարմիններ, գետեղում են կուրծ-
քին խոռոչին մէջ՝ սրտին երկու քովե-
րը։ Իրենց ձևովը, գոյնովը և մեծու-
թեամբն ճիշդ կը նմանին ոչխարի մը
թոքերուն։ Այս գործարանները ըս-
պաբային հիւսուած մ'ունին՝ ի ան-
թիւ ու անհամար ծակերով, որոց մէջ
կը մանէ օդը յատուկ խողովակի մը

միջոցաւ։ այս խողովակը, որ շնչառ-
կուի, վերէն կը հարողակցի թոքին
և բերնին ետեւի մասին հետ, և վարէն
երկնիւղելով կը մանէ երկու թոքերուն
մէջ։ Այսպէս շնչառութեամբ օդը սոյն
գործարանաց մէջ առածուելով՝ ար-
դէն դէպ ի հոն եկող անկենդան ու
սև արեւն վրայ տարաբանակա՛ն ազ-
դեցութիւն մը կընէ, և զանի կը կեր-
պարանափոխէ կենդանի ու կարմիր ար-
եւն։ Այս է հիւսուածի շնչառութեան
խակաւան գործողութիւնն, որ եթէ
վարկեան մը դադարի, անկարելի կըլ-
լայ ապրիլ, զի կեանքն ուրիշ բան չէ
եթէ ոչ անմիջապէս, և անուշեղմութիւն չէ՝
լինիլ առանց անընդհատ նորոգման և
կենդանացման սնուցատու հեղուկին,
որ է արիւնն։

Շնչառն ապրիլ է, և շնչառութեան
պաշտօնն ամենէն կարևորն է կենաց
պահպանութեան։ Եթէ մարտադրութիւ-
նը անհադարձ արեւը կը հայթայթէ
արեւան, շնչառութիւնն ալ զայն կը
կենդանացնէ։ Եթեւրբ բացարձակ է այն
ճշմարտութիւնը, որ հետագոյն դարե-
րուն մէջ իսկ՝ օդը կենդանաւոր սկզ-
բունք մը ճանչցուած էր։

Օդը ներշնչութեամբ թոքերուն մէջ
մտնելով՝ արեւն կը թողու մաս մը իւր
կենդանաւոր սկզբունքէն, որ է իւր-
առա՛նը։ Իւր, և արիւնէն կառնու մաս
մը նորա անկենդան սկզբունքէն, որ է
օքսիգէնը։ Եթեւրբ այսպէս արեւն շնչառ-
ողը նոյնը չէ՝ ինչ որ էր ներշնչելով
օդը, առաջինը մահուութիւն կողմ մ'է,
իսկ երկրորդը կենսաւառ ոգի մը, որով
ճշմարտ և խիստ ճարտար խոսած
կըլլայ Ռուսոս երբ կըսէ «մարդկան
շունչը սպանիչ է մարդուն թէ ի նիւ-
թական և թէ ի բարոյական»։

Այսպէս արիւնն ստանալով օքսի-
գէնը կենդանացող սկզբունքն, կը
վերանորոգի, կը ստանայ իւր բաց
կարմիր գոյնն, և կը դառնայ նորէն
յատուկ խողովակներով սրտին ձախ
խոռոչին մէջ, ուսկից ինչպէս տեսանք,
նորէն մարմնոյն չորս կողմը կը բաշխ-
ուի։

Ահաւասիկ կենաց և սնուցանի խակ-
կան պաշտօններն, զոր կրնանք համա-
ուստելով ամփոփել երկու ասորի մէջ և
ըսել, արեւն արեւն անկենդան արեւն
իւր շնչառութիւն, և օդը օդը օդը օդը
իւր շնչառութիւն, և օդը օդը օդը օդը
իւր շնչառութիւն։ Ուստի մարտադրու-
թիւնը, շրջումը և շնչառութիւնը, ե-
րեք գլխաւոր պաշտօններ են առանց
որոց կեանքը անկարելի է վառ պահել։

Բայց բաւական չէ՝ միայն որ արիւ-
նը մարտադրութիւնէն առած տարերքը
ամեն կողմ բաշխելով՝ ամեն կողմ սն-
ուցանէ ու ապրիլն, բաւական չէ՝ որ
թոքերուն միջոցաւ շնչառած կեն-
դանութիւնը հիւսուածոց ամեն մա-
սանցը մէջ տարածէ։ Այլ այս ար-
իւնը ուրիշ պաշտօններ ևս կը կատարէ
կազմութեան մէջ, արիւնն որ այլ և
այլ գործարանաց մէջ ծնունդ կուտայ
զանազան հիւթոց և հեղուկներու
որք կամ, իբր աւելորդ ինչ, կազմու-
թեանէն դուրս կարտաքսուի, և կամ
իբր կարեւոր նիւթ, կազմութեան
մէջ պաշտօններ ունին կատարելու,
այսպէս արիւնն է որ լեարդին մէջ
կ'արտադրէ մազձը, երկրամեղ մէջ
կ'արտադրէ մէզը, մարմին մէջ կ'ար-
տադրէ քրտինքը, աչաց մէջ կ'արտա-
դրէ արտասուքը, և ևն։

Իւրեւր. Լեարդը մեծահատոր մարմին
մ'է որովայնին վերի կողմը՝ առաւել-
մին աջ դին գետեղումը։ Ասի գոր-
ծարան մ'է որ պաշտօնն ունի արտադ-
րելու կանաչ և լեղի հիւթ մը, որ կը

րելու կանաչ և լեղի հիւթ մը, որ կը
կոչուի մազ։ Մարդուն լեարդը ունի
ոչխարի մը լեարդին մեծութիւնն, ձեւն
ու գոյնը։ Մազձը քանի որ արտադ-
րուի, հետզհետէ յատուկ ամանի մը
մէջ կը դրդուի որ գետեղում է լեար-
դին ստորին մակերեւոյթին վրայ։ Այս
ամանէն մասնաւոր խողովակի մը մի-
ջոցով մազձը կանաչի, և կը թափի
աղեաց առաջին մասին մէջ, ուր պաշ-
տօն ունի կերակրոց իւղային մասը
մարսելու։

Երկրամեղն, երկրամեղն ալ երկու
թխագոյն մարմիններ են որովայնային
խոռոչին մէջ՝ աղիքներուն ներքեւը
մէջքին երկու կողմերը գետեղում։
Աստեք ալ ճիշդ ոչխարի մը երկրամեղ-
րուն կը նմանին, երկրամեղն պաշտօ-
նն է արտադրել մեղ։ Մէզը քանի որ
արտադրուի, հետզհետէ յատուկ խո-
ղովակներու միջոցաւ, կը դրդուի մեծ
պարկի մը մէջ, որ գետեղում է ո-
րովայնին ստորին մասին մէջ՝ այս պար-
կը կոչուի բոլորայն։ Երբ վաճառչը
լինայ, այն ամեն զգալի կըլլայ միզ-
ման պէտքը։

Ահաւասիկ սնուցանի գլխաւոր գոր-
ծարանաց մի համառօտ նկարագիրն և
նոցա պաշտօններն։ Մենք եւս կը կոչ-
ուին այս գործարաններն, վասն զի
աստեք են որ կը կատարեն սնունդն։
Եւ ինչ է սնունդն։

Նորոգել մեր հիւսուածներն, փոխել
զմեղ կ'ազմող տարրերն, արտաքսել հի-
ւնը և ընդունել նորը։

Երբեք մեր մարմինը, մեր հիւս-
ուածներն մեր միւսը նոյնը չեն միւսը
ինչ որ էին յառաջ։ Նոցա էսութիւնը
կազմող տարրերն անդադար կըլուծ-
ուին, մենէ դուրս կը վառուին, և ու-
րիշներ կուտան անոնց տեղը։ Երբեք
Մեր մարմինն, մեր թոքերէն և մեր
ամեն մասերէն շոգի և քրտնոց մի-
ջոցաւ անդադար դուրս կ'ելնեն զի-
րենք կազմող տարրերն, և արիւնը
նոցա տեղ կը բերէ ուրիշներ։ Հացը
զոր մեք կը ճաշակեմք, մեր նպատա-
կէն է, ոչ այդ հացին անոգումը՝ ճո-
նապարհորդութիւն մ'ընել առ մեր
աղիքներուն երկայնութեան մէջ, այլ
առնել և քաղել նորա մէջէն ինչ որ
կ'որենոր է մեր հիւսուածոց։ Ուստի
հացը աղիքներուն մէջ մարսուելէն
յետոյ, նորա տարրերն կը մտնեն մեր
արեւն մէջ, արիւնը ամեն կողմ շըր-
ջելով, ամեն կողմ կը բաշխէ ինչ որ
առնել էր նոյն հացէն, և հիմա սոյն
այս հացը կամ նորա տարրերն կ'անց-
նին մեր հիւսուածոց մէջ, և կը լինին
մեր միւսերն, մեր մարմին, մեր արիւ-
նը և ևն։ Այս է որ կը կոչուի սնուցա-
նելու գործը։

Արիւնն է՝ մշտնջենաւոր հաճարա-
նոց մը ուսկից բոլոր կազմութիւնն իւր
պիտոյքը կը հայթայթէ, և որ ինքն
ևս կը ճոխանայ՝ մարտադրութեամբ
պատրաստուած տարրով։

Մենք եւս բազադրութիւնը շա-
րունակապէս կատարուելով ի մեզ
մեր մարմինը անդադար պիտի աճէր
և պիտի մեծնար յաւիտեան, եթէ
միւս կողմանէ մեր հիւսուածներն և
մեր ամեն մասունքը չըլուծուէին, և
նոցա տարրերը չըլուծուէին մեզմէ.
բայց այս ևս կը կատարուի Մեր թո-
քերը ինչպէս ըսինք, անդադար դուրս
կուտան շոգիներ և այլ կազմող, որք
ժամանակ մը մեր հիւսուածոց մասերն
էին. մեր մարմը անդադար դուրս կը
վաճէ շոգի և քրտինք, որք ժամանակ
մը մեր մարմինը, մեր հոսութիւնը կը
կազմէին։

Այսպէս, աղիւն ունկնդրք, մեր
մարմինը անդադար կը լուծուի և կը
բազադրուի՝ անդադար կ'աւելի և կը
չինուի, նորեր կուգան և հիններն կը
վաճուին, այս շարունակական շար-
ժումն է որ կը կոչուի սնունդ և կեանք.
մի կ'ըսէք թէ բնաւ անհրաժեշտ ըլլալ
այն ասացուածը որ կ'ըսէ թէ «շար-
ժումը կեանքն է»։ ճշմարտ փիլիսո-
փայինն է այս, և ճշմարտութիւնը՝ և
նրեւ է և բացարձակ։ Երբ բազադրու-
թեան շարժումը աւելի ընդարձակ է
քան զլուծմանն՝ մարմինը կ'աճի և կը
զարգանայ, այսպէս է մանկութեան,
աղայութեան և պատանեկութեան ե-
ղանակներուն մէջ։ Երբ բազադրու-
թեան շարժումը հաւասար է լուծման
շարժման, մարմինը կը դադարի աճելէ,
և կ'ստանայ անփոփոխ վիճակ մը, այս-
պէս է չափահասութեան մէջ։ Եւ երբ
բազադրութեան շարժումը նուազ ըն-
դարձակ է քան զլուծմանն, մարմինը
կը նուազանայ և կը տկարանայ, այս-
պէս է ծերութեան եղանակին մէջ։
Խակ կ'ի՞նչ դադար բոլորովին բազադ-
րութեան շարժումը՝ մահն է այդ ան-
շարժութեան տխուր վիճակը։

Բոլոր վերոյգրեւներուն մէջ կը
տեսնեմք որ մարդոյն մարմինը, ինչ-
պէս նաև բոլոր կենդանեաց, մեղ օ-
րինակ մը կ'ընծայէ ճարտարաշինու-
թեան և կատարելութեան, որոց բնու-
թեն համեմատի մեր շինած ամենէն
ճարտար մեքենայներն իսկ. անօր ու
անհամար հանճարեղ շինուածներ կան
հոն, որոց առջև անկատար նմանու-
թիւններ են մեր ճարտարապետներուն
և մեքենագէտներուն կառուցած հրա-
շակարարները։

Մեր մարմնոյն գործարանաց շինու-
ածը և նոցա վերայ ազդող գործութիւնը
աշխարհի իմն կանոնաւորուած և յար-
մարցուած են, որ խիստ և խիստ վեր
է քան զմարդկային իմաստութիւնն
ու գիտութիւնը, և որչափ մեք գի-
տեմք և գնենք մեր գործարանաց
խորը՝ և նոցա կորողութիւնք, այն-
չափ պէտք մը կ'զգամք գերագոյն Ա-
րարչի մը վերջնաճախ այն հանճարը,
որ միայն կարող է շինել այն հրաշալի
չէնքը, և նորա մէջ գոյութեան
և շարժման ազդիչ գործութիւնը։

Բայ ի սնուցանի պաշտօններէն և
նոցա գործարաններէն, կան նաև կազ-
մութեան մէջ կարգ մը գործարաններ
և պաշտօններ, որքն պատճառ ունին ոչ
սնուցանել զմեզ, այլ ճանչցունել ա-
նոր արտաքին աշխարհը, գիտակ ը-
նել զանի բազմութիւն իրողութեանց և
երկութիւնը որք կը կատարուին աշ-
խարհի մէջ, վերջապէս յարաբերու-
թեան մէջ գնել զմարդ դուրսի աշխար-
հին հետ, այս գործարաններն են ըզ-
գայաբաններն, տեսանկիւր լսելիք
ևն. որոց վերայ վերջը պիտի խօսիմք
Բայ աստի կ'այ նաև գանկին մէջ մէկ
կեդրանակա՛ն և ամենակարևոր գոր-
ծարան մը, որ աւելն է կազմութեան
և կը հրամայէ ու կը կառավարէ ամ-
բողջ կազմութիւնը, այս գործարանն
է ուղեղը և նորա յարակից ջիւղերը,
որոց վերայ պիտի խօսիմք երբ աւելի
ներկայանայ։

Միհրան Վարդապետեան

ՅԱՆՈՒՅ ԳՈՐԻՍԻ

ԿԱՐԱՅՈՅ Ս. ՓԱՆՈՍԵԱՆ